

ՉՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԿԸԸ-Ը ՍԿՍԵՅՑ ԲՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒՄԸ

ԱԶԳՅՈՒՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈՍԲԵՆԱԿ ՏԱՐԱԾԱՐԳՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԿՏՊԱԳՐՎԵՆ ՎՐԱՅԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՎՐԱՅԵՐԵՆ-ԱՂՐԵՑՄԱՆԵՐԵՆ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ



Չոկտեմբերի 10-ին, ընտրություններից տասը օր շուտ, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Թբիլիսիի երեք տպարաններում սկսեց Վրաստանի խորհրդարանի, սակրեբուլոյի միջանկյալ եւ Աջարիայի ինքնավար Հանրապետության գերագույն խորհրդի ընտրությունների համար քվեաթերթիկների տպագրումը:

Ի ն չ ա ե ս հայտարարեց Կենտրոնական ը ն տ ր ա կ ա ն հանձնաժողովի խոսնակ Նաթիա Իոսելիանին, հանձնաժողովի անդամների, միջազգային եւ տեղական դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ընդհանուր առմամբ, տպագրվելու է 3325100 քվեաթերթիկ, որոնցից 2838600-ը նախատեսված է տեխնոլոգիական սարքերով հագեցած ընտրատեղամասերի, իսկ 486500 քվեաթերթիկը՝ սովորական ավանդական ընտրատեղամասերի համար:

Հատկանշական է, որ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների համար, քվեաթերթիկները տպագրվում են վրացերեն-հայերեն եւ վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով:

Գործընթացի ավարտին քվեաթերթիկներն օրենքով սահմանված ժամկետում կփոխանցվեն մարզային ընտրական հանձնաժողովներին, ապա՝ տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

- Ընտրողների միասնական ցուցակում գրանցված է շուրջ 3,5 միլիոն ընտրող, որից 950 հազարը գրանցվել են արտասահմանում,- հայտարարեց Նաթիա Իոսելիանին:

Ըստ խոսնակի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արտասահմանյան 42 երկրներում ինքնել է 67 ընտրատեղամաս:

Ի ն չ ա ե ս հայտարարեց Կենտրոնական ը ն տ ր ա կ ա ն հանձնաժողովի խոսնակ Նաթիա Իոսելիանին, հանձնաժողովի անդամների, միջազգային եւ տեղական դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ընդհանուր առմամբ, տպագրվելու է 3325100 քվեաթերթիկ, որոնցից 2838600-ը նախատեսված է տեխնոլոգիական սարքերով հագեցած ընտրատեղամասերի, իսկ 486500 քվեաթերթիկը՝ սովորական ավանդական ընտրատեղամասերի համար:

Հատկանշական է, որ ազգային փոքրամասնու-

## ԲԻԶՆԱՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԹԻՄՆ ՈՒՆԻ ԵՐԿՐԻ ԱՐԺԱՆԱԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՀՂԱՆՄԱՄԲ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ»

Չոկտեմբերի 15-ին, առաջիկա խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախաձեռնությամբ, Ջուզղիդիում անցկացվեց նախընտրական հանրահավաք՝ Սամեգրելո-Ջեմո Սվանեթի երկրամասի բնակիչների մասնակցությամբ:

Հանրահավաքին «Վրացական երազանքի» իշխանության օրոք երկրի ձեռքբերումների, առաջիկա ծրագրերի մասին խոսեցին կուսակցության նախագահ Իրակլի Դարիբաշվիլին, գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, գործադիր քարտուղար Մամուկա Ադինարաձեն, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին:

Հանրահավաքին ելույթ ունեցավ «Վրացական երազանք» կուսակցության հիմնադիր եւ պատվավոր նախագահ Բիծինա Իվանիշվիլին:



Իր խոսքում Բիծինա Իվանիշվիլին ներկայացրեց «Ազգային շարժման» իշխանության օրոք վավերացված ապօրինությունների, մարդու իրավունքների խախտման, գործարարության ճնշման եւ մյուս օրինախախտումների մասին, նշելով, որ «Վրացական երազանքը», իշխանության գլուխ գալուց առաջին իսկ օրերից, վիթխարի ջանքեր է ցուցաբերում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ



## ԳԻՐԳԻ ԿԱԼԱՆԴԱՐԻՇՎԻԼԻ. «ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎԵԼ ԵՄԻՉԱԶԳԱՅԻՆ ԶԱԹՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱԴԱՏԱՄԽԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՅՎԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 26-ին կանցկացվեն Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունները, որոնք վճռորոշ նշանակություն կունենան ինչպես երկրի ներքին իրավիճակի, այնպես էլ՝ արտաքին դիրքերի հստակեցման ուղղությամբ: Մեր գրուցակիցն է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գիրգի Կալանդարիշվիլին:

- Բատոն Գիրգի, շատ է գրվել ու ասվել հոկտեմբերի 26-ի ընտրությունների նշանակության մասին:

- Իրոք, առաջիկա ընտրությունները նշանակալի են՝ էլնելով մի քանի գործոններից:

Նախ՝ ընտրություններն անցկացվում են եվրամիության թեկնածուի կարգավիճակի ստացումից հետո, ինչը նշանակում է, որ առավելագույնս հաշվի են առնվելու համապատասխան եվրոպական եւ միջազգային չափորոշիչները:

Երկրորդ՝ փոխվել է ընտրական համակարգը: Սահմանադրությունում կատարված վերջին փոփոխությունների համաձայն, խառը՝ համամասնական եւ մեծամասնական համակարգերի փոխարեն ընթացիկ ընտրություններում կկիրարկվի միայն համամասնական ընտրակարգը, այսինքն՝ ընտրողներն ընտրելու են միայն մեկ քաղաքական սուբյեկտի:

Երրորդ՝ ընտրություններին կիրառվելու են լայնածավալ տեխնոլոգիաներ, որոնց շրջանակներում ընտ-

րողների գրեթե 90 տոկոսի ձայները հաշվարկվելու են էլեկտրոնային սարքերի միջոցով:

- Դուք նշեցիք նորարարական տեխնոլոգիաների ներդրման մասին: Որքանով է դա ապահովում քվեարկության գաղտնիությունը:

- Հաճախ, երբ խոսքը վերաբերում է էլեկտրոնային տեխնոլոգիաներին, էլեկտրոնային ընտրությանը, ապա շատերը այն փորձում են նույնականացնել համացանցով հեռավար ընտրությունների անցկացման, ընտրողների անձի նույնականացման գործընթացի հետ, թեպետ դա չի համապատասխանում իրականությանը: Առանձնակի ցանկանում են նշել, որ համացանցը, որպես այդպիսին, չի կիրարկվում եւ համացանցի օգտագործմամբ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱԶՄԵՐՈՒԿ» ՆԱԽԱԳԾԻՆ ԱԶԱԿՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻՑ Է»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանդես գալով «խաղաղության խաչմերուկ» միավորելով անվտանգությունն ու ժողովրդավարությունը՝ խորագրով համաժողովին, նշեց, որ Վրաստանն ու Իրանը աջակցում են «խաղաղության խաչմերուկ» նախագծին, իսկ Թուրքիայի դիրքորոշումների հետ նախագիծը կարող է համարվել:



- Ըստ էության, «խաղաղության խաչմերուկը» կարող է ռեալ ինտեգրվել Միջին միջանցքի հետ, որը Թուրքիայի արտաքին քաղաքական կարեւորագույն թեմաներից է: Դա շատ բնականոն ինտեգրում է: Մենք չենք ստեղծել

Նախագիծը այն պարտադիր Միջին միջանցքի նախագծի հետ ինտեգրելու նպատակով, այլ՝ վերջինս բնական ճանապարհով է ինտեգրվում դրա հետ,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿԱՎԵԼԱՑՎԵՆ

Վրաստանի կառավարության խորհրդարան ներկայացրած 2025 թվականի բյուջեի առաջին տարբերակում, գործադիր ծրագրում է 2025 թվականի հունվարից ավելացնել բոլոր կատեգորիաների կենսաթոշակառուների տարիքային կենսաթոշակը:

Ներկայացրած նախագծի համաձայն՝ 70 եւ բարձր տարիքի անձանց կենսաթոշակը կբարձրանա 35 լարիով ու կկազմի 450 լարի, բարձրադիր գոտիներում բնակվող 70 եւ ավելի բարձր տարիքի կենսաթոշակառուների կենսաթոշակը կկազմի 540 լարի, մինչեւ 70 տարեկան անձանց կենսաթոշակը կբարձրանա 20 լարիով եւ կկազմի 335 լարի, բարձրադիր գոտիներում բնակվող մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների կենսաթոշակը կկազմի 400 լարի:

Բացի տարիքային կենսաթոշակից, հաջորդ տարի 35 լարիով կբարձրանա մինչեւ 18 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, 20 լարիով՝ աշխատանքի այլ կատեգորիաների նպաստները:

Նշենք, որ բյուջետային գործընթացի համաձայն, 2025 թվականի բյուջեի նախնական տարբերակի քննարկումը կշարունակվի նորընտիր խորհրդարանում: Վերջնական տարբերակը կընդունվի դեկտեմբերին:



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԹԻՄՆ ՈՒՆԻ ԵՐԿՐԻ ԱՐԺԱՆԱԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՆՄԱՄԲ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գործադրեց երկրի էկոնոմիկայի կարգավորման, մարդու արժանապատվության և իրավունքների վերականգնման ուղղությամբ:

- Այսօր այնքան հստակ տարբերություն կա մյուս կողմում կանգնած «Վրացական երազանքի» և «Հավաքական ազգային շարժման» միջև, որ հասարակության համար շատ հեշտ է ընտրություն կատարել,- նշեց Բիծինա Իվանիշվիլին և հավելեց, որ «Վրացական երազանքի» թիմը, վրաց ժողովրդի հետ միասին, կարող է ավարտին

հասցնել իր սկսած եվրոպական ուղին:

- Մեր թիմը երկրում խաղաղություն, կայունություն և բարգավաճում ապահովելու փորձ, կարողություն է, որ ամենակարեւորն է, քաղաքական կամք ունի: Մենք կարող ենք տրամաբանորեն ավարտին հասցնել վրաց ժողովրդի հետ սկսած եվրոպական ճանապարհը և դառնալ Եվրամիության անդամ՝ պահպանելով մեր արժանապատվությունը: Ի պատասխան՝ արտաքին ուժերի գործակալությունը դեռ ցանկանում է պատերազմ, քառս և աղքատություն՝ հանգեցնելով երկրի կործանմանը:

Չի կարելի թույլ տալ, որ ներքին ու արտաքին թշնամիները կործանեն Վրաստանը: Մինչ օրս նրանք չեն հասկացել, որ որքան էլ փորձում են մոլորեցնել հանրությանը, երկու Վրաստան չկա: Վրաստանը միակ երկիրն է, որի բնակչությունը ցանկանում է դառնալ եվրոպական ընտանիքի անդամ՝ խաղաղությամբ, արժանապատվությամբ և բարեկեցությամբ, պահպանելով սեփական արժեքները: Հենց դա է ինձ վստահեցնում, որ հոկտեմբերի 26-ին մենք մեկ անգամ եւս կմիավորվենք, կհաղթենք և երկիրը կտանենք դեպի խաղաղություն,- ասաց Բիծինա Իվանիշվիլին:

ՇԱԿԱ ԴԱՊՈՒԿՎԻԼԻ. «ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԽՈՍԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԻԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՐԵՆ ԸՆՏՐՎԱԾ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ»



Վրաստանի խորհրդարանի նախագահ Շախվա Դավայաշվիլին, արձագանքելով վերջին ժամանակներում երկրի բնակչության անունից քաղաքական տարբեր ուժերի հայտարարություններին, նշեց, որ ժողովրդի անունից իրավունք ունի խոսել միայն օրինականորեն ընտրված իշխանությունը:

Նրա խոսքով «Որոշակիորեն մեր քաղաքա-նությունն այնպես ընթացավ, այդ թվում նաեւ մեր բարեկամների քաղաքականությանը, որ հասանք այն սահմանագծին, երբ քաղաքական համակարգը սկսեց տեղապտույտներ տալ»: - Կարելի է, որպեսզի բոլորը գիտակցեն և բոլորը որոշակիորեն պահպանեն այն հարաբերությունները, որոնք պետք է գոյություն ունենան երկրների միջև, միմյանց ինքնիշխանության հարգանքի շրջանակներում: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե իբր մեզ

ընկալում են որպես իրենց գործը չիմացողների, և դա վերաբերում է նաեւ խորհրդարանին, ինչը չի համապատասխանում իրականությանը: Եվ այս ընտրություններն էլ հստակ դա ցույց կտան: Վերջին ժամանակներում օտարերկրացիները համախա են ելույթ ունենում մեր ժողովրդի անունից, խոսում են անգամ նրանք, ովքեր Վրաստանում չեն եղել: Նրանք, չգիտես ինչու, գտնում են, որ իրավասու են խոսելու մեր ժողովրդի անունից: Ուստի, այս ընտրությունները կարելի էր են նաեւ նրանով, որ բոլորին ցույց տան, թե ո՞ւմ է աջակցում մեր ժողովուրդը, ի՞նչ դիրքորոշում ունի, ովքեր են իշխանությունում, որպեսզի չհամարձակվեն երկրի իշխանության հետ խոսել երկրի ժողովրդի անունից,- հայտարարեց Շախվա Դավայաշվիլին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ «3+3» ԶԵՎԱԶԱՓՈՎ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարարության հաղորդագրության համաձայն՝ Վրաստանը չմասնակցեց հոկտեմբերի 18-ին Ստամբուլում կայացած «3+3» հարթակի երրորդ հանդիպմանը:



«3+3»-ը դարաբայան 44-օրյա պատերազմից հետո Թուրքիայի նախաձեռնած և Ռուսաստանի աջակցությունը ստացած տարածաշրջանային համագործակցության ձեւաչափ է: Այն ենթադրում է հարավկովկասյան երեք երկրների՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի, ինչպես նաեւ տարածաշրջանի երեք տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի մասնակցությունը: Վրաստանը մինչ այս չի մասնակցել հանդիպումներից և ոչ մեկին՝ պատճառաբանելով

Ռուսաստանի հետ հակասությունները: Այս հարթակի առաջին միստը 2021-ին անցկացվել է Մոսկվայում՝ փոխարտգործնախարարների մասնակցությամբ: Անցած տարի Թեհրանում կայացած միստն արդեն նախարարների մակարդակով էր:

ԿԱԽԱ ԿԱԼԱԶԵ. «ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՎԵՐԱԴԱՌՆԱ ԱՆՃՅԱԼ ԵՎ ԿԸՆԹԱՆԱ ԱՌԱՋ՝ ԽԱՂԱՂ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՃԱՆԱԴԱՐՉՈՎ»



Անդրադառնալով առանձին քաղաքական ուժերի կողմից առաջիկա ընտրությունների առնչությամբ հնչող հայտարարություններին՝ «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն հայտարարեց, որ այսօր երկիրը կանգնած է ընտրության առջև և անհրաժեշտ է գոյությունը պահպանել ոչ միայն ֆիզիկապես, այլև՝ հոգեպես, այն արժեքների հիման վրա, որոնք պահպանելով մեր ինքնությունը՝ կազմում են վրացական պետականության հիմնասյունը:

Խոսելով «Միասնական ազգային շարժման» իշխանության օրոք երկրում ստեղծված իրավիճակի մասին, Կախա Կալաձեն նշեց, որ մարդիկ չեն մոռացել, թե ինչպես էին ոտնահարվում նրանց իրավունքները, ինչպես էին հաշվեհարդար տեսնում այլախոհների հետ, ինչ ճնշման տակ էին գտնվում գործարարները: Կախա Կալաձեի խոսքով՝ միայն «Վրացական երազանքի» հաղթանակի դեպքում հնարավոր կլինի վստահ հայտարարել, որ երկիրն իր արժեքներով, ինքնությամբ ու արժանապատվությամբ կկարողանա իր հաստատուն տեղը զբաղեցնել քաղաքակիրթ աշխարհի երկրների թվում:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ԸՍՏ ՀԱՄԱՆԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԿԱԶՄԻ 7,5 ՏՈԿՈՍ

Համաշխարհային բանկը հրապարակել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնտեսական ակնարկը, որը ներկայացնում է տարածաշրջանի և դրանում ընդգրկված երկրների տնտեսական աճի կանխատեսումները:



Ձեկույցի համաձայն, 2024 թվականին Վրաստանում տնտեսական աճը կկազմի 7,5 տոկոս, ինչը զգալիորեն բարձր է պոտենցիալ մակարդակից և պայմանավորված կլինի տնային տնտեսությունների մասնավոր սպառմամբ և պետական ծախսերով, ինչպես նաեւ՝ ներդրումներով: «Հիմնական ռիսկերը ներառում են անորոշությունը՝ կապված հետընտրական շրջանի հետ, և Վրաստանի վճռական առաջընթացը ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին»,- նշվում է Համաշխարհային բանկի զեկույցում:

Համաշխարհային բանկի նախորդ կանխատեսումների համաձայն, 2024 թվականին Վրաստանում տնտեսական աճը սահմանվել է 5,2 տոկոս մակարդակում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՄԲԵՐԸ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՆ ՏԱՐԱԾԵԼ ԿԵՂԾ ՏԵՍԱ ԵՎ ԱՌԴԻՈ ԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի Պետական անվտանգության ծառայությունը տարածել է հայտարարություն, ըստ որի, ստացված տեղեկությունների համաձայն, քաղաքական շրջանակներին առնչվող խմբերը ծրագրում են Վրաստանում կայանալիք խորհրդարանական ընտրություններին նախորդող օրերին տարածել կեղծ տեսա և աուդիո ձայնագրություններ՝ պատրաստված արհեստական ինտելեկտի ու ժամանակակից այլ տեխնոլոգիաների միջոցով: Ընդ որում, վերոնշյալ կեղծ ձայնագրություններում օգտագործվելու են Վրաստանի կառավարության ներկայացուցիչների ձայները և տեսագրությունները:

«Պետական անվտանգության և քաղաքացիների խաղաղ գոյակցության շահերից ելնելով՝ տեղեկացնում ենք հանրությանը, որ, ըստ ստացված տեղեկատվության, քաղաքական շրջանակներին առնչվող խմբերը, Վրաստանում կայանալիք խորհրդարանական ընտրություններին նախորդող օրերին, նախատեսում են տարածել արհեստական ինտելեկտի և այլ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով պատրաստված կեղծ տեսա և աուդիո ձայնագրություններ:

Նշված կեղծ ձայնագրություններում կօգտագործվեն Վրաստանի կառավարության ներկայացուցիչների ձայները և տեսագրությունները: Նշված կեղծ տեղեկատվության տարածման նպատակը իշխանության թեւերի միջև առձակատում հրահրելն է, ինչպես նաեւ՝ իշխանության և ուղղափառ եկեղեցու միջև թշնամանք սերմանելը և իշխանության ու արեւմտյան գործընկերների միջև հարաբերությունների վատթարացումը:

Կեղծիքի արդյունքում ձեռք բերված տեղեկատվական նյութը տարածողները հանրությանը ներկայացնում են իրենց ստեղծած կեղծ գրառումները որպես Պետական անվտանգության ծառայությունից արտահոսած տեղեկատվություն և ենթադրում են, որ այդ գործողությամբ նրանք մի կողմից կվարկաբեկեն գերատեսչությունը, իսկ մյուս կողմից՝ դիստանս կստեղծեն իշխանության թեւերի միջև: Նշված սադրանքի հիմնական նպատակն է արհեստակարգաբար բողոքի ալիքի ստեղծումն և ակտիվացումը, երկրում ապակայունացման օջախների ձեւավորումը, որոնք, ի վերջո, կծառայեն քաղաքական նպատակների: Մենք ուշադիր հետևում ենք նշված խմբերի գործունեությանը և, օրենքի ցանկացած խախտման դեպքում, օրենքով սահմանված կարգով կձեռնարկվեն համապատասխան միջոցներ»,- ասված է հաղորդագրությունում:



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԱՄԱԼՔԱՆՔԻ ԱՐՈՒԸ ԿՈՒՆԵՆԱ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՃԱՆԱԴՐՆԵՐ

Ախալքալաքի մունիցիպալիտետի Արուլ գյուղում ճանապարհային ենթակառուցվածքի վերանորոգման աշխատանքներն ավարտական փուլում են:

Համապատասխան ծառայության ներկայացուցիչների հետ Արուլի վարչական միավորումում է եղել փոխքաղաքապետ Թեյմուրազ Մծեղիձեն: Նա տեղում զննել է կատարված աշխատանքները:

Այս փուլում Արուլում ավարտվել է ասֆալտբետոնե ծածկի անցկացման գործընթացը եւ միաժամանակ տեղադրվել են ջրատարները:

Ընդհանուր առմամբ, ճանապարհի 2244 մ երկարությամբ հատվածում, երկաթբետոնե ծածկ է անցկացվելու:

Ծրագիրը ֆինանսավորվում է մարզերի զարգացման հիմնադրամից եւ տեղական բյուջեից: Արժեքը կազմում է 1 298 300 լարի:

ՆԻՆՈԾՄԻՆՂԱՅԻ ԶԱՆԳԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱԳԵՏԱՐԱՆՈՒՄ

Նինոծմինղայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի Կանանց սենյակում տեղի ունեցավ հանդիպում Նինոծմինղայի մունիցիպալիտետում ծնողագուրկ երեխաների հետ:

Հանդիպումը կազմակերպել էր Նինոծմինղայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, հուշարձանների պահպանության, երիտասարդների հարցերի եւ տուրիզմի զարգացման ծառայությունը:

Ծառայության պետ Լեւոն Վարդանյանի խոսքով՝ նմանատիպ հանդիպումներ բազմիցս են անցկացվել եւ ապագայում նույնպես կանցկացվեն:

Ծնողագուրկ երեխաներին, Նինոծմինղայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից, տրվեցին խորհրդանշական նվերներ:

ԱՄԱԼՃԻՄԵ ՄՈՒՏԻՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈՒՍՏՈՆ՝ ՈՐԲԱՌՈՒՄ

Ախալցխիսի ամրոցում հանդուրժողականության խորհրդանիշ հանդիսացող Ռաբաթ պատմական թաղամասում անցկացվեց մուլտիմեդիային փառատոն, որի շրջանակներում կազմակերպվեցին տարբեր տեսակի մշակութային եւ ժամանցային ակտիվություններ: Փառատոնին ներկա էին Սամցխե-Ջավախեթի երկրամասային մարզպետարանի պատմական հիմնադրամի կողմից:



սի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Ախալցխիսի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին, սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոմիձեն, երկրամասային վարչության տեղական ինքնակառավարման եւ քաղաքի հասարակության ներկայացուցիչներ:

Ախալցխիսցիները եւ քաղաքի հյուրերը հնարավորություն ունեցան ծանոթանալու Ախալցխիսի մունիցիպալիտետում ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչների մշակութային ավանդույթներին եւ տեղական խոհանոցին: Ներկայացված էին ինչպես վրացական ու մեսխական, այնպես էլ՝ ազգային փոքրամասնությունների բազմերանգ ավանդական ուտեստներ, քաղցրավենիք եւ այլն: Ներկայացված էին նաեւ՝ հայկական, լեհական, հու-

նական եւ այլ ուտեստներ: Փառատոնի նշանակության մասին խոսեցին Ախալցխիսի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին, երկրամասի նահանգապետի առաջին տեղակալ Դավիթ Վարդաշվիլին, Սամցխե-Ջավախեթի համալսարանի պրոֆեսոր, Ախալցխիսի պատվավոր քաղաքացի Մերաբ Բերիձեն, Ախալցխիսի պատվավոր քաղաքացի Հայկ Բալասանյանը:

Փառատոնի շրջանակներում անցկացվեց համերգ՝ տեղի մենակատարների եւ համույթների մասնակցությամբ, անցկացվեցին մարզական ակտիվություններ, տեղական արտադրանքի եւ նկարիչների գործերի ցուցահանդեսներ: Փառատոնի շրջանակներում անցկացվեց նաեւ Միասնական ազգային քննություններին 100 տոկոս պետական դրամաշնորհի ստացած պիսալցիսցի երեք ուսանողների պարգևատրման արարողությունը: Նրանց փոխանցվեց քաղաքապետարանի դրամապարգևը:

Միջոցառումն անցկացվեց Ախալցխիսի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կազմակերպմամբ:

ԲՈՒՆԻՍԻ ԵՆԹԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ

Բոլնիսի մունիցիպալիտետում ենթակառուցվածքային միջոցառումներն ընթացքի մեջ են: Մունիցիպալիտետի քաղաքապետի պաշտոնակատար Բուբա Գոբեջիշվիլին, սակրեբուլոյի նախագահի առաջին տեղակալ Գիորգի Մարիանաշվիլու եւ քաղաքապետարանի մյուս ներկայացուցիչների հետ, դիտեց Բոլնիսի քաղաքում փողոցների կարգավորման աշխատանքներն ու ծանոթացավ աշխատանքների ընթացքին: Մասնավորապես, քաղաքի Արսեն Իկոլթելու փողոցում սալահատակման աշխատանքներն իրականացրել են տեղական բազալտի սալաքարերով: Սույն ենթակառուցվածքային նախագիծն իրականացվում է տարածաշրջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամի եւ տեղական բյուջեի համաֆինանսավորմամբ: Ընդհանուր առմամբ հատկացվել է 760650 լարի:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ԱՄՆՈՒԿՅԱՆԸ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՎԱՐԺԱՆՔ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային ղեկարարամենտի ներկայացուցիչները («Թբիլիսիի», «Բաթումիի» եւ «Փոթիի» ձեւակերպման տնտեսական գոտիների, նաեւ՝ «Սարփի»,

«Բաթումիի նավահանգիստ», «Բաթումիի օդանավակայան», «Փոթիի եւ Կուլեի» նավահանգիստների եւ «Փոթիի ազատ ինդուստրիալ գոտու», «Թբիլիսիի օդանավակայան», «Կարմիր կամուրջ», «Սաղախլու» ավտոմոբիլային եւ «Ղազբեգի» մաքսային անցակետերի ոչ պարտադիր ստուգման եւ մաքսային ռիսկերի կառավարման վարչության աշխատակիցները) մասնակցեցին վարժանքներին,



որոնք նվիրված էին ապօրինի առևտրի դեմ պայքարի ու նտավոր սեփականության պաշտպանության ուժեղացմանը: Վարժանքների շրջանակներում հրավիրված միջազգային փորձագետների մասնակցությամբ՝ մաքսային աշխատակիցներին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալու հեղինակային իրավունքների տեղերի կողմից տրված նոր տեղեկատվությանը եւ մարտահրավերներին կոնկրետ արտադրանքի տեխնիկական բնութագրերի վերա-

բերյալ, ինչն առաջիկայում է՛լ ավելի արդյունավետ կդարձնի ապրանքի նույնականացման գործընթացը: Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը եւ ապօրինի վաճառքի դեմ պայքարը, իրենից ներկայացնում է միջազգային առևտրի աջակցության հիմնական մեխանիզմներից մեկը, եւ դրանում մաքսային ղեկարարամենտի ներգրավվածությունը նշանակալի է: Վարժանքին, որի նպատակը մաքսային ղեկարարամենտի աշխատակիցների որակավորման բարձրացումն ու անհրաժեշտ գործնական ունակությունների յուրացումն է, մասնակցեցին այնպիսի ճանաչված կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպիսիք են «KEN-VUE», «Bio-Oil», «Alliance Against Counterfeit Spirits (AACS)», «CNH», «SAMSUNG», «TOYOTA», «PUMA» «LACOSTE», «ADIDAS» «APPLE» եւ «CANON»:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ՝ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Պահպանության ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գործում է 2004 թվականից:


Պահպանության ոստիկանության առաքելությունն է ապահովել երկրի քաղաքացիների անվտանգությունը եւ նրանց գործունեության համար ստեղծել առողջ միջավայր: Պահպանության ոստիկանության հիմնական գործունեությունն իրենից ներկայացնում է իրավաբանական/ֆիզիկական անձանց գույքի եւ անձի անվտանգության պահպանություն, նաեւ՝ երկրի ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն:

Վրաստանի ողջ տարածքում պահպանության ոստիկանության կողմից (ինչպես տեխնիկական միջոցներով, այնպես էլ՝ ոստիկանության ուժերով) պաշտպանված է ավելի քան 15 հազար օբյեկտ, այդ թվում՝ նշանակալի ռազմավարական օբյեկտներ՝ միջազգային օդանավակայաններ, ազգային գանձարաններ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններ, երկաթուղային մայրուղիներ:

- Պահպանության ոստիկանությունը քաղաքացիներին առաջարկում է հետեւյալ սպասարկումները.
  - \* ոստիկանական պահպանություն
  - \* պահպանություն տեխնիկական միջոցներով
  - \* պահպանություն-ուղեկցում պահակախմբով
  - \* ավտոմեքենայի GPS վերահսկողություն
  - \* անձնական պահպանություն

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 2 ԿԳ ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԵՂԵՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Սարփի» մաքսային անցակետի աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի քաղաքացու բեռնատար ավտոմեքենան:



Խուզարկության արդյունքում հայտնաբերվել է երկու կապոց, ընդհանուր առմամբ՝ 2,600 կգ չհայտագրված ոսկյա զարդեր: Չհայտագրված ոսկեղենի մաքսային արժեքը կազմում է 350,723 լարի: Գործի նյութերը հետագա արձագանքման համար փոխանցվել են Ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

Վերջին վեց ամիսների տվյալներով, մաքսային վերահսկողության շրջանակներում,

«Սարփի» մաքսային անցակետում բացահայտվել է շուրջ 10 կգ չհայտագրված ոսկեղենի ներկրման 67 փաստ: Չհայտագրված ոսկեղենի ընդհանուր արժեքը կազմել է 1401119 լարի:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն



«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ» ՔԱՐՈՉԱՐՇԱԿԸ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ» ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՐՈՉԱՐՇԱԿԸ ԸՆԴՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԹԲԻԼԻՍԻ, ԻՍՏԱՆ



Նախընտրական հանդիպումները շարունակում է նաև «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից Իսաևի պատվիրակ Նիկա Էլիսաշվիլին: Կուսակցության պատվիրակը, Թբիլիսիի սակրեբուլո- յի մեծամասնական պատգամավոր Կախա Լաբուչիձեի հետ միասին, Թբիլիսիի Վագիստուբանի թաղամասի, Քե- թեան թագուհու, Լեխ Կաչինսկու, Գաբրիել Սալոսի փո- ղոցների, Նավթլուդի, Էլիայի թաղամասերի բնակիչների հետ հանդիպմանը ներկայացրեց կուսակցության նա- խընտրական ծրագիրը, նշելով, որ դրանում առանձնակի ուշադրություն է հատկացված ինչպես ենթակառուցային օբյեկտների կարգավորմանը, այնպես էլ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

ԱՆԱԼՅԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ - ՆԻՆՈՏԻՆՆԵՐ



Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալ- քալաքիի եւ Նինոծմինդայի մեծամասնական պատգա-

մավոր, հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարա- նական ընտրություններում «Վրացական երազանք» կու- սակցության պատվիրակ Սամվել Մանուկյանը, Վրաստա- նի խորհրդարանի 10-րդ գումարման պատգամավոր, «Վրացական երազանքի» ընտրացուցակով պատգամա- վորության թեկնածու Սմբատ Կյուրեղյանը նախընտրա- կան քարոզարշավի շրջանակներում շարունակում են հանդիպումներ անցկացնել Ախալքալաքիի եւ Նինոծմին- դայի մունիցիպալիտետների մի շարք գյուղերի բնակիչ- ների հետ: Նրանք Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մու- նիցիպալիտետների քաղաքապետեր Մելքոն Մակարյա- նի եւ Անի Մոսոյանի, սակրեբուլոյի նախագահներ Նաի- ռի Իրիցյանի ու Վահան Արոյանի ուղեկցությամբ, հան- դիպումներ ունեցան Ախալքալաքիի մունիցիպալիտետի Գոման, Ջաքվի, Թիրկնա, Բուղաշեն, Օլավերդի, Նինոծ- մինդայի մունիցիպալիտետի Գորելովկա, Օրլովկա, Եֆ- ռեմովկա, Ժղանով, Սպասովկա, Սամեբա, Սաթխա, Օրո- ջալար, Մեծ եւ Փոքր Արագյալ գյուղերի բնակիչների հետ:

ԱՆԱԼՅԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ - ԲՈՐՇՈՒՄ - ԱՍԴԻՆՆԱ - ԱԳԻՉԵՆԻ



Առաջիկա խորհրդարանական ընտրությունների քա- րոզարշավին ակտիվ ներգրավված Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալցխիսի, Բորժոմի, Աս- պինձայի եւ Ադիգենիի մեծամասնական պատգամավոր, հոկտեմբերի 26-ի ընտրություններում «Վրացական երա- զանքի» պատվիրակ Անտոն Օբուլաշվիլին քարոզարշա- վի շրջանակներում հանդիպումներ անցկացրեց Ախալ- ցխիսի մունիցիպալիտետի Ծղալթբիլա, Մխվիլիսի, Աբաթ- խեի, Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա, Տոլոշի գյուղերի բնակիչների, Բորժոմի մունիցիպալիտետի Տա-

բաժուրի գյուղի եւ երիտասարդական կենտրոնի ներ- կայացուցիչների հետ:

Անտոն Օբուլաշվիլին, Վրաստանի խորհրդարանի կր- թության կոմիտեի նախագահ Գիվի Միխանաձեի հետ, հանդիպումներ ունեցավ Ախալցխիսի, Բորժոմի, Ասպին- ձայի մունիցիպալիտետների հանրային դպրոցների ման- կավարժների հետ:

ՄԱՆՆՈՒՄ - ՎԱՐՊԱԲԱՆԻ

Վրաստանի խորհրդարանի 10-րդ գումարման Մառ- նեուլիի եւ Գարդաբանի մեծամասնական պատգամա- վոր, առաջիկա խորհրդարանական ընտրությունների վե- ռոնշյալ մունիցիպալիտետներում «Վրացական երազան- քի» պատվիրակ Ջաուր Դարգալին հանդիպումներ է ու- նեցել Մառնեուլիի մունիցիպալիտետի Կիրիխքո, Կար- միր գյուղի, Դուլարի գյուղերի ընտրական տեղամասե- րի բնակիչների, ինչպես նաև՝ մունիցիպալիտետում գոր- ծող բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ:

ԲՈՒՆԻՍԻ - ԴԱՍԵՆՍԻ - ԹԵԹՐԻՇՎԱՐԻ - ԾԱԿԱ

Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետ, հոկտեմ- բերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրու- թյունների Բոլնիսիի, Դամնիսի, Թեթրիճղարոյի եւ Ծալ- կայի մունիցիպալիտետներում «Վրացական երազանքի» պատվիրակ Դավիթ Շերազադիշվիլին քարոզարշավի շր- ջանակներում հանդիպումներ է ունեցել Ծալկայի մունի- ցիպալիտետի Դալբիլիսա, Դուլշի, Թեթրիճղարոյի մունի- ցիպալիտետի Սամշվիլո, Դաղթ, Բոլնիսիի մունիցիպա-



լիտետի Խատիսոփեի, Վանաթի, Ռաճիսուբանի, Բոլնի- սի, Քվեմո Բոլնիսի գյուղերի բնակիչների հետ:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՀԱՐՑԱԶՈՒԹՅՑ

ԳԻՈՐԳԻ ԿԱԼԱՆԴԱՐԻՇՎԻԼԻ. «ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎԵԼ Է ՄԻՋԱՉԱՅԻՆ ԶԱԹՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՉԿԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(Ակիզը՝ 1-ին էջում)

խուսանավումները կտրականապես բացառվում են: Ավելացնեմ նաև, որ էլեկտրոնային տեխնոլոգիա- ների կիրառմամբ ընտրությունների անցկացումը դյուրացնում է ձայների հաշվարկը, զգալիորեն կր- ճատում՝ քվեարկության նախնական արդյունքնե- րի հրապարակման ժամկետը, նվազագույնի հասց- նում մարդկային գործոնով պայմանավորված սխալ- ների հնարավորությունը: Էլեկտրոնային սարքերը կտրական են եւ ձայների հաշվարկման ժամանակ հաշվառում են միայն այն քվեաթերթիկները, որոնցում ընտրական սուբյեկտների դիմացի շրջանակը ճիշտ է ներկված, հակառակ դեպքում՝ քվեաթերթիկը հա- մարվում է չեղյալ:

- Տեխնոլոգիական ի՞նչ նորամուծություններ եք մտադիր ներդնել ոչ էլեկտրոնային, ավանդական ընտրական տեղամասերում:

- Ինչպես նշեցի, հոկտեմբերի 26-ի ընտրություն- ներին ընտրողների շուրջ 90 տոկոսը քվեարկելու է էլեկտրոնային տեխնոլոգիաների օգտագործմամբ: Բնականաբար, անուշադրության չենք մատնում այն 10 տոկոսը, որտեղ քվեարկությունը տարվելու է ավան- դական մեթոդներով: Այդ տեղամասերում կգործարկ- վեն մի շարք նորամուծություններ: Այդ տեղամասերում են կլինեն պլանշետներ, որոնց օգտագործմամբ հնարա- վոր կլինի տեղամասերից արդյունքներն օպերատիվորեն փոխանցել ԿԸԳ-ին, ինչը նշանակալիորեն կնվազեցնի նախնական տվյալների հրապարակման ժամկետը: Իսկ ամենանշանակալին այն է, որ քվեարկության ավարտից անմիջապես հետո կկազմավորվեն հաշվառման կենտ- րոններ, որտեղ կթվայնացվեն ավանդական ընտրական տեղամասերի քվեաթերթիկները:

Ընդհանուր առմամբ, հոկտեմբերի 26-ին կբացվեն 3031 ընտրատեղամասեր, որից 2263 տեղամասում կգոր- ծեն էլեկտրոնային տեխնոլոգիաները, իսկ 768-ում՝ ընտ- րությունները կանցկացվեն ավանդական կարգով:

- Որո՞նք են ձայների հաշվառման եւ արդյունքների հանրագումարման ընթացակարգերը եւ ի՞նչ ժամկետ-



ներ են նախատեսված դրանց համար:

- Ինչ վերաբերում է նախնական արդյունքներին, ապա ձայների հաշվառման սարքերը դա իրականացնում են արագ: Քվեարկության ավարտին կհաջորդեն ավանդա- կան ընթացակարգերը: Կիրականացվի շարժական քվեա- տուփերի քվեաթերթիկների հաշվառում, որից հետո կծե- կներկայացվի բոլոր իրավասու անձանց: Պլանշետների միջոցով վերոնշյալ տվյալները, տեղեկանքը անմիջա- կանորեն կառաքվի Կենտրոնական ընտրական հանձ- նաժողովին: Ընտրատեղամասերից արդյունքների ան- միջական առաքումը ԿԸԳ-ին նշանակալիորեն նվազեց- նում է նախնական արդյունքների հրապարակման ժա- մկետը: Ըստ մեր կանխագծումների՝ ընտրությունների նախնական արդյունքները հնարավոր կլինի հրապարա-

կել քվեարկության օրվա ժամը 22.00-ից ոչ ուշ: Բնա- կանաբար, դա վերջնական չէ եւ կախված է շատ գործոններից:

- Ընտրական քանի՞ սուբյեկտ է մասնակցում խորհրդարանական ընտրություններին եւ քանի՞ դիտորդական կազմակերպություն է հետեւելու ընտրությունների ընթացքին:

- Ինչպես գիտեք, ընտրություններին մասնակցու- թյան համար քաղաքական սուբյեկտների գրանցու- մը անցկացվում է մի քանի փուլով: Ինչ վերաբերում է հոկտեմբերի 26-ի ընտրություններին, ապա դրանց մասնակցել ցանկացողները, մինչեւ հուլիսի 15-ը՝ ներկայացրին համապատասխան դիմումը եւ աջա- կիցների ցուցակը: Գրանցման երկրորդ փուլը սկս- վում է ընտրությունների նշանակման օրից եւ մին- չեւ ընտրությունները առնվազն 57 օր շուտ, կուսակ- ցությունները, ովքեր ունեն խորհրդարանում ներկա- յացուցիչներ, իրավասու են համապատասխան դի- մումով դիմել հանձնաժողովին եւ վավերացնել մաս- նակցության իրենց ցանկությունը: Վերոնշյալ երկու փուլերի ավարտից հետո, ընդհանուր առմամբ, գրանց- վեց 27 քաղաքական միավորում, որից հետո միայն 19-ը ներկայացրին կուսակցական ցուցակները: Չե- տևաբար, ցուցակների ստուգումից հետո, 19-ից 18 քաղաքական միավորումներն անցան գրանցում, այսինքն՝ հոկտեմբերի 26-ի ընտրությունների քվեաթերթիկներում ներկայացված են 18 ընտրական սուբյեկտներ:

Ինչ վերաբերում է ընտրությունների ընթացքը վերահս- կող դիտորդական կազմակերպություններին, ապա, հոկ- տեմբերի 15-ի դրությամբ, ԿԸԳ-ում գրանցում է անցել 90 տեղական ոչ կառավարական կազմակերպություն, 64 միջազգային կազմակերպություն եւ 98 լրատվամիջոց: Ավելացնեմ, որ մենք հնարավոր ամեն ինչ անում ենք ընտրությունները բարձր մակարդակով, միջազգային չա- փորոշիչներին համապատասխան անցկացնելու նպա- տակով, եւ հուսով ենք, որ ընտրությունները կանցկաց- վեն բարձր մակարդակով, ինչն իր հաստատումը կգտ- նի ինչպես դիտորդական, այնպես էլ՝ միջազգային հան- րության կողմից: